Բաթումի «Սբ. Մեսրոպ Մաշտոց» կիրակնօրյա դպրոցի ուսուցչուհի և թատերական խմբի ղեկավար

Սաթենիկ Դանիելյանը ծնվել է 1973թ-ի մարտի 10-ին, ՀՀ ք.Եղեգնաձորում:

1979 -1989թթ սովորել և ավարտել է Բաթումի թիվ 6 միջնակարգ դպրոցը (հայկական մասնաճյուղ):

Զուգահեռ ուսանել է Բաթումի Զ. Փալիաշվիլու անվան պետ. երաժշտական դպրոցում, որն ավարտել է 1987թվականին:

1990-1995թթ. Սովորել և ավարտել Թբիլիսիի Սուլխան Սաբա Օրբելյանու անվան Պետ. Մանկավարժական Համալսարանի բանասիրական ֆակուլտետը, ստանալով հայոց լեզվի և գրականության և վրաց լեզվի և գրականության ուսուցչի որակավորում:

1996թ-ից մինչև 2010թ աշխատել է Բաթումիի թիվ 6 միջնակարգ դպրոցի հայկական մասնաճյուղում որպես մանկավարժ:

1997- 2001թթ ընտրվել է Բաթումիի քաղաքապետարանի պատգամավոր:

2003թ-ին աշխատել է «Աջարիա» հեռուստատեսությունում ՝ թարգմանիչ:

2007թ-ից ք. Երևանի Խ. Աբովյանի անվան Պետական Մանկավարժական Համալսարանի ասպիրանտուրայի հայցորդ է “Տարիքային և մանկավարժական հոգեբանություն“ մասնագիտությամբ:

2010 – 2014թթ աշխատել է մանկավարժ Բաթումի թիվ 9 հանրային դպրոցի հայկական մասնաճյուղում:

2009-ից աշխատում է Բաթումի “Խեսեդ Ցվի“ կազմակերպության դպրոցում՝ մանկավարժ - հոգեբան:

2014-ից աշխատում է Բաթումի «Գիմնազիա 21 դար» հանրային դպրոցում, որպես մանկավարժ- հոգեբան:

2014-2015թթ աշխատել է Վիրահայոց թեմի ք. Օզուրգեթի «Սուրբ Սահակ Պարթև»

հայկական մեկօրյա դպրոցում:
2015թ-ից աշխատում է Վիրահայոց թեմի Բաթումի Ալեքսանդր Մանթաշյանցի անվան կրթամշակութային և երիտասարդական կենտրոնի «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» հայերենի ուսուցման մեկօրյա դպրոցում `ուսուցիչ: Միաժամանակ ղեկավարում է կենտրոնում գործող ասմունքի և թատերական խմբակները :
Տիրապետում է հայերեն, ռուսերեն, վրացերեն լեզուներին, զբաղվում է թարգմանությամբ:
Ամուսնացած է, ունի մեկ որդի: